

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Ներկայ բողէին Ֆրանսիայում կատարւում են մեծամեծ հանդէսներ ի պատիւ ռուսաց նաւատորմի ալցելութեան: Ինչպէս որ երկու տարի առաջ, 1891 թ., Ֆրանսիական նաւատորմի մի էսկադրան, փոխադիրալ Ժերվէի առաջնորդութեամբ, ի նշան քաղաքական միաբանութեան Ռուսիայի և Ֆրանսիայի մէջ, Կրոնշտատ պատերազմական նաւահանգիստը ալցելեց և ինչպէս այդ առիթով Պետերբուրգում մեծ հանդէսներ սարքեցին ի պատիւ Ֆրանսիական հիւրերի, այնպէս էլ այժմ ռուսական նաւային էսկադրան, առաջնորդութեամբ կոնտրադիրալ Աւելանի՝ փոխալցելութիւն է անում Ֆրանսիական առաջնակարգ նաւահանգիստ Տուլոն քաղաքին, և Ֆրանսիացիք են հանդէսներ սարքում իրանց բարեկամ Ռուսիայի պատւին՝ թէ Տուլոնում և թէ Պարիզում, և ոչ մի համայնք չի ուզում յետ մնալ բարեկամական ցոյցերից:

Ցոյցերը մեծ են, փառահեղ են, վիթխարի են:

Դոքա՝ քաղաքական ցոյցեր են:

Ռուսաց նաւային էսկադրայի Տուլոն ալցելելովը ոչ միայն ամրապնդւում է արդէն տարիներ առաջ կցած մի բարեկամութիւն, այլ դորանով իսկական դաշն է կապւում Ռուսիայի և Ֆրանսիայի միջև: Այդպիսի ցոյցերից յետոյ անհնարին է իրար հետ կապւած չզգալ և բոլոր քաղաքական միջազգային գործերում ձեռք ձեռքի տւած չլնթանալ:

Բայց և այնպէս թոյլատրելի է հարցնել՝ կայ այդ երկու պետութիւնների մէջ թղթով-կապւած դաշինք թէ ոչ:

Այդ բանին պատասխան դեռ ևս չկայ, մինչդեռ հաստատ է, որ Ռուսիայի ու Ֆրանսիայի հակառակ բանակում՝ Գերմանիայի, Աստորիա-Ունգարիայի և Իտալիայի միջև՝ թղթով կապւած դաշինք կայ, ամեն հինգ տարին մի անգամ վերանորոգելի:

Բայց եթէ թղթով կապւած դաշինք էլ չլինի, — Ռուսիայի և Ֆրանսիայի բարեկամութեան բնաւորութիւնը շատ և շատ պարզ է: Միջին Եւրոպայի եռապետական դաշնակցութիւնը ուղղած է մէկ կողմից Ֆրանսիայի, միւս կողմից Ռուսիայի դէմ: Անգամ եթէ Ռուսիայի և Ֆրանսիայի միջև որոշ դաշնակցական ծրագիր էլ չլինէր, — պէտք էր ընդհանուր հակառակորդների դէմ միանալ, թոյլ չտալու համար որ, ոչ միայն պատերազմի դէպքում, այլ և սովորական միջազգային խնդիրներում, Ֆրանսիան և թէ Ռուսիան ջոկ ջոկ վերցրած՝ ամեն մէկը երեք միաբան պետութիւնների դիմաց կանգնէր: Այդտեղ դեր են կատարում թէ բարձր քաղաքական շահերը և թէ ֆինանսական, տնտեսական, մաքսային շահերը, որպէս նաև երկրորդական քաղաքական շահերը, մի խօսքով ամեն տեղ, ուր մի պետութեան քաղաքական ոյժը, նորա պրեստիժը դեր է կատարում:

Այսպէս ուրեմն Ռուսիայի և Ֆրանսիայի բարեկամութիւնը, եթէ չասենք դաշնակցութիւնը, տարրական պահանջից բղխած մի բարեկամութիւն է: Հետևապէս այդ առիթով հարց դնել այդ բարեկամութեան անկեղծութեան և խելացիութեան մասին, հակադրելով Ֆրանսիայի հանրապետականութիւնը և Ռուսիայի միապետականութիւնը, — այդ հարցը, ըստ մեզ, բոլորովին պարապ հարց է:

Քաղաքական դիրք պահպանելու համար հաւասարակշռութեան կոմբինացիաների մէջ մտնելը ոչ նոր է և ոչ էլ երբ և իցէ կարող է հնանալ:

Այլ բան է, եթէ դորանով դաշնակցողները ստիպւած լինեն հետևել այնպիսի ներքին քաղաքականութեան, որը խախտէր դաշնակցող պետութիւններից իւրաքանչիւրի հիմքերը:

Այդ սակայն, այդպէս չէ:

Բայց եթէ ներկայ քաղաքական բարեկամութիւնը Ռուսիայի և Ֆրանսիայի միջև սկսի այդ մտքով խորը ազդել իւրաքանչիւրի ներքին քաղաքական կեանքի վրայ լուսաւորութեան հակառակ մտքով, — մենք համոզւած ենք՝ որ այդ քաղաքական բարեկամութիւնն էլ կը սկսի խախտել: